# Գիտաժողովները՝ հայ գիտնականների գիտական նվաճումները ներկայացնելու առիթ

**Անուշ ՍԱՄՎԵԼՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ նախագահությունը հավանություն տվեց 2005 թվականի ընթացքում կազմակերպված գիտաժողովների բոլոր կազմակերպիչներին պատվոգրեր շնորհելու՝ ԳԱԱ պրեզիդենտ **Ֆադեյ Սարգսյանի** առաջարկությանը:

2005 թվականին կայացած միջազգային գիտաժողովների արդյունքների քննարկում տեղի ունեցավ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության հոկտեմբերի 12-ի նիստի ժամանակ: Նշվեց, որ այս գիտաժողովները խիստ կարեւոր են՝ գիտական համագործակցության զարգացման, երիտասարդ գիտնականներին ընձեռված նոր հնարավորությունների եւ միջազգային գիտական շուկայում հայ գիտնականների նվաճումների ներկայացման առումով:

*«Մենք դեռեւս մրցունակ ենք միջազգային մասշտաբով, չնայած այն բանին, որ գիտությունը խիստ ցածր է ֆինանսավորվում. եւ այս ամենն ի շնորհիվ այն բանի, որ Հայաստանն ունի եւ պահպանել է գիտական դպրոցներն ու ավանդույթները»*,–հայտարարեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Սերգեյ Համբարձումյանը**: Որպես օրինակ նա բերեց ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտը: Երեք տարվա ընթացքում ինստիտուտը կազմակերպել է 4 միջազգային հեղինակավոր գիտաժողովներ, որոնց մասնակցել են ավելի քան 150 գիտնականներ աշխարհի տարբեր երկրներից:

Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր **Յուրի Շիլինգարյանի** կարծիքով՝ ազգությամբ հայ գիտնականների միավորումը կնպաստի Հայաստանում գիտության զարգացմանը: Եվ պատահական չէ, որ «Հայ ֆիզիկոսների 1-ին միջազգային համաժողովի» զեկույցների 1/3-ը նվիրված էր ֆիզիկայի զարգացման գերակա ուղղություններին: Կոնգրեսի աշխատանքներին մասնակցել են 400 մասնագետներ 15 երկրներից:

«Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովը» մեծ հետաքրքրություն առաջացրեց հայ գիտական հասարակայնության շրջանում:

ԳԱԱ փոխպրեզիդենտ, հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար **Վլադիմիր Բարխուդարյանի** խոսքով՝ գիտաժողովում քննարկված հարցերը մեծ նշանակություն ունեն համայն հայության համար: Նա նաեւ հայտարարեց, որ Երեւանում հայագիտական կենտրոնի ստեղծման առաջարկությունը դեռեւս չի արժանացել համընդհանուր հավանության: *«Այս հարցում սփյուռքը ցուցաբերում է զգուշավորություն»*,–ասաց Վ. Բարխուդարյանը:

Վերջինս նշեց նաեւ, որ մեծ հաջողությամբ է Երեւանում անցել միջազգային գիտաժողովը՝ նվիրված հայ-իտալական պատմամշակութային առնչություններին:

«Կոմպյուտերային գիտություն եւ ինֆորմացիոն տեխնոլոգիաներ» 5-րդ միջազգային գիտաժողովը դարձել է հայտնի ոչ միայն գիտական, այլ նաեւ բիզնեսի եւ պետական շրջանակներում: Ինչպես հայտնեց ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի եւ ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ փոխպրեզիդենտ **Յուրի Շուքուրյանը,** գիտաժողովին ներկայացվել է 135 զեկույց 12 երկրներից, այդ թվում առաջին անգամ զեկուցողներ են եղել Հնդկաստանից եւ Իրանից:

ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս–քարտուղար **Էմիլ Գաբրիելյանը** ամփոփեց «Երիտասարդ բժիշկների երրորդ միջազգային գիտաժողովի» արդյունքները եւ նշեց, որ այս անգամ գիտաժողովին մասնակցել են ավելի քան 30 երկրների երիտասարդ գիտնականներ:

Նրա խոսքով՝ «Բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզ» 1-ին հայ-իսրայելական սեմինարի շրջանակներում շարունակվում է հայ-իսրայելական կապերի ընդլայնումը: Սեմինարի արդյունքում իսրայելական կողմը առաջարկել է Իսրայել ուղարկել երիտասարդ հայ գիտնականների՝ վերապատրաստման համար:

Մեկ այլ գիտաժողով նվիրված է եղել «Կենսաբժշկական հետազոտությունների էթիկական փորձաքննության» հարցերի մանրամասն քննարկմանը: